243
4-21

mz. 58

10

3188

12004

11614

280
843-4Կ
820-ԱԿ
243
4-21
ՊՀՅ. 3935
1005
20117

# ԿԱՆՈՆ

Յորժամ բարեպաշտօն ծնօղք յանձնեն զզաւակս իւրեանց ՚ ընդ զօրաւոր պաշտպանութ՟բ Սբ. Գլխադրին ։

ՏՊԱԳՐԵԱԼ

1841 ամի

Արդեամբ Սրբոյ Աթոռոյս Երուսաղէմի միաբան ակնեցի խօջենց Գրիգորեան Սարկաւագ Նիկողայոսին ։

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ Գ...
С.С.Р.А Публичная Би...
7/XI. 1922
Ա. ՄՅԱՍ...

Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ԱՌԱՔԵԼՈՑ

# ԽՐԱՏ

Զկնի ժամերգութեա՛ն , տայ աւագ լուսարարն շուր-ջառ՝ խաչ և գաւազան Արքազն Պատրիարքին . ապա չորս վարդապետաց շուրջառ . և զգեցուցա-նեն մանկան շապիկ , և տան լուցեալ մոմ ՚ի ձեռն ։ Սարկաւագն և դպիրքն զգենուն շապիկս , սար-կաւագն ուրարս և դպիրքն մոմեղէնս ։ Սարկաւագն ՚ի ձայն ասէ . Եւ ևս խաղաղութե՛ զ՚՚։ Հայրապետն՝ Օրհնութի՛ւ և փառք հօր և որդւոյ՚՚։ Թագաւորացն շարական . Որ էն յէութեան որդի՚՚։ Եւ գնան առաջի դրան սուրբ Գլխադրին ։ Շուրջառաւոր վարդապետք երկուքն յաջմէ դը-րան , և երկուքն յահեկէ կանգնին , և մանուկն ա-ռաջի դրան ՚ի ծունկս ընդդէ՛մ , Հայրապետն խըն-կարկէ ՚ի դրան , և շուրջանակի ամենեցուն . տայ զբուրվառն սարկաւագին և մտանէ ՚ի ներ Գլխադիրն ։ Սարկաւագն ասէ . Եւ ևս խաղաղ՚՚։ Գոհացարուք՚՚։ Հայրապետն՝ երեք Տէր ողորմեա՝ և ընթեռնու զաղօթսն ։ Փառաւորեալ յամենայնի մարդասէր՚՚։ Սաղմոս . Եղբարքն մեր զարմանս ենիս ծաղկեցին՚՚։ Եւ չորս շուրջառաւոր վարդապետքն ընթեռնուն ՚ի վերայ մանկանն՝ մինն յաջմէ և միւսն յահեկէ , դպիրքս և զսա նորանս . ապա ասէ Սարկաւագն Քարոզ . Վասն գտանելոյ մեզ զշնորհս ՚ի բարե՚՚։



Եւ

Եւ Հայրապետն ընթեռնու զաղօթս · Տ͞ր ա͞ծ ա՛ :
Յետոյ Պահպանիչ ՚ի վերայ մանկան , և մուծանեն զնուիրեալ մանուկն ՚ի ա͞ք գլխաւորն ՚ի նշան նուիրանաց նորա յերկրպագութի͞ սուրբ Գլխաւորին : Հայրապետն բացատրէ զխորհրդաւոր խորհրդարարողու͞ե : Եւ կալեալ զձեռանէ մանկան՝ յանձնէ կրկին ծնողացն : Եւ լուցեալ մոմեղինօք և բուրվառաւ առեալ տանին կարգաւորեալ վարդապետք

՚ի սենեակս ծնողաց՝ ասելով շարական :

՛Նոր սիոն ծնեալ մանկունք՛ :



Շնորհաբուղխ աղբիւր՝ Մայր ողորմութեան ,
կաթիլ մի շնորհաց՝ տուր ինձ մայրական .
Որդիք Զեբեդեայ՝ Յակովբ և Յօհան ,
յանձնեալ զաւակիս՝ կացէք միշտ պաշտպան :

Սարկաւագն · Քարոզէ ։

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ։

Գոհացարուք զտէրն Այ̃ փրկչէն մերմէ , զի արժանի արար զմեզ մատուցանել ի տաճար սբ̃ն զմանուկս զայս , և խնդրեմք միջնորդութբ̃ սբ̃յ և մեծի Մծբնեցւոյն Յակոբայ , զի ընկալցի զսա ի խնամս մարդասիրութե իւրոյ · որպ երբեմն ընկալաւ զքս̃ զմանկութն ի գիրկս իւր · և զօրացուսցէ զսա շնորհօք հոգւոյն սբ̃յ ի մխիթարութի և ի սփոփանս ծնողաց սորին · լինել ժիրաջան բարի այժմ և յապայն ։ ամենակալ տր̃ ած̃ մեր կեցո և ողորմեա ։

Ապա Հայրապետն ընթեռնու զԱղօթս ։

Տէր ողորմեա · տր̃ ողորմեա · տր̃ ողորմեա ։

Փառաւորեալ յանմահ մարդասէր տր̃՝ տուիչ բարութեց · և ընդունող աղօթից · ընկալ և այժմ զմանուկս զայս՝ զոր ուխտիւ մատուցանեն ծնողք սորա , լցո զսա ամ̃ հոգևոր իմաստութբ̃ , որպ յայնժամ ա̃ծեղէն բազ-



կաւ

կաւ քով զմանկտիսն՝ զորս ընկալար , զորա-
ցն և զսա շնորհօք հոգւոյդ սրբոյ , որով ըստ
հաճոյից կամաց քոց զարգացել արժանա-
ւոր լիցի սրբութ՟ե և անբծութ՟ե հասանիլ
յուսոյ կենացն յաւիտենից . և քեզ ընդ
հօր և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք և պա-
տիւ . այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-
տենից ամէն :

Սաղմոս . Արդարքն իբ՟ր զարմաւենիս ծաղկեսցին ,
և իբ՟ր զմայրսն լիբանանու բազումք եղիցին :

Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ : Գլ. 44 . համր :

Բայց արդ՝ լուր յակոբ ծառայ իմ , և
իսրայէլ զոր ընտրեցիդ :
Այսպէս ասէ տ՟ր ա՟ծ քո՝ որ արար զքեզ .
և որ ստեղծ զքեզ յորովայնի . և տա-
կաւին օգնականութ՟ի գտցես :
Մի երկնչիր ծառայ իմ յակոբ՝ և սի-
րեցեալդ իմ ի՟էլ՝ զոր ընտրեցի :
Զի ես տաց ջուր ՚ի ծարաւու՝ որոց գնան

 յան

յանջրդւոյ. եդից զոգի իմ ի վ̃ր զաւակի քոյ՝ և զօրհնութիւն իմ ի վ̃ր որդւոց քոց:

Եւ զուարճասցին իբրև զխոտ ջրարբի, և իբրև զուռ ի մէջ ջուրց գնացից:

Մինն ասիցէ՝ ա̃յ եմ ես, և միւսն խրախոյս բարձցէ յանուն ա̃յ յակովբայ, և միւսըն եւս գիր հանցէ ձեռամբ իւրով՝ թէ ա̃յ եմ ես, և յանուն իսրայէլի խրախոյս բարձցէ:

Ընթերցուածս յեսայեայ մարգարէէ: Գլ 60. համ 4:

Համբարձ շուրջ զքև զաչս քո, և տես ժողովեալ առ քեզ զա̃մ մանկունս քո, զի եկին հասին ի հեռաստանէ որդիք քո, և դստերք քո ի վերայ ուսոց նոցա բարձեալք բերիցին:

Յայնժամ տեսցես՝ և խնդասցես, երկիցես և զարհուրեսցիս ի սրտի քում. զի փոխեսցի ի քեզ մեծութի̃ ծովու՝ և ազգաց և ժողովրդոց:

Եկեսցեն ի քեզ երամակք ուղտուց, և



ժած

ծածկեսցեն զքեզ ուղտերամակքն մա-
դիամու և գեփայ ։

Ամենեքեան ի սաբայէ եկեսցեն , բե-
րել ոսկի և կնդրուկ՝ և ականս պատուա-
կանս . և փրկութեն տն առցեն զաւետիս ։

Եւ ամ խաշինք կեդարու ժողովեսցին
առ քեզ , և խոյք նաբէօթայ ածցին ,
և մատուսցին ընդունելի պատարագք ի
վր սեղանոյ իմոյ , և տուն աղօթից իմոյ
փառաւորեսցի ։

Ով են սոքա՝ որք իբրև զամպս թռու-
ցեալք են , և իբրև զաղաւնիս ձագա-
խառն երամովքին գան առ իս ։

Ինձ՝ ակն ունէին կղզիք՝ և նաւք թարշշի
յառաջագոյն ածել զորդիս քո ի հե-
ռաստանէ ։

Զարծաթ և զոսկի ընդ իւրեանս , վասն
անուան տն սրբոյն , և վն սրբոյն իսրայէլի
փառաւորելոյ ։

Պօղոսի առաքելոյն յ'Եբրայեցւոց Թղթոյն է ըն-
թերցուածս ։ Գլ. 11 . համար 11 ։

Հաւատովք և ինքն Սառա, որ ամուլն կոչեցեալ էր . զզօրութի՛ առնոյր զերման որդեծնութե՛, ընդունէր . և ի տարաժամ հասակի ծնանէր . քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոստացաւն ։

Սառն որդ և ի մինչէն ծնանէին . և այն՝ ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս երկնից բազմաւք, և իբրև զաւազ առ ափին ծովու առանց թուոյ ։

Ըստ հաւատոյ մեռան ամենեքին սոքա, և չեւեւս ընկալեալ զաւետիսն . այլ ի հե-ռուստ տեսեալ զնոսա և ցնծացան . և խոստովան եղեն՝ եթէ օտարք՝ և պանդուխտք են յերկրի ։

Զի որք զայսպիսին խօսին, յայտ առնեն՝ եթէ զգաւառ իւ՛ց խնդրեն ։

Զի եթէ զայն յիշէին՝ ուստի ելին՝ գոյր ժամանակ դառնալոյ անդրէն ։

Նա աւանիկ այժմուական իւ՛ց ցանկա-



ցեալք

ցեալք են , այսինքն է՝ երկնաւորին . մի
որոյ ոչ ամօթ համարի ած՝ կոչել նոցա ած .
քանզի պատրաստեաց նոցա զքաղաք :

Հաւատովք մատոյց աբրահամ ՚ի փոր-
ձութեան իւրում զիսահակ պատարագ . և
զմիամօրն մատուցանէր , որոյ զաւետիսն
ընկալեալ էր :

Որում ասացաւ , թէ իսահակաւ կոչես-
ցի քեզ զաւակ : եդ ՚ի մտի իւրում , թէ
և ՚ի մեռելոց կարող է յարուցանել ած ;

Դաւիթ ասէ": ՚Ի բերանոյ մանկանց տղայոց և
ստնդեայց հաստատեցեր զօրհնութիւն :

Մէջ Աւետարանիս Զնի ՚Ք.ՌԻ՝ որ ըստ Մարկոսի :
Ու Տէրն մեր Զա ՚Ք.Ռ :

Իսկ մատուցանէին առ նա մանկունս , զի
ձեռն դիցէ նոցա . իսկ աշակերտքն սաս-
տէին այնոցիկ՝ որք մատուցանէինն :

Իբրև ետես յս , բարկացեալ սաստեաց
նոյն և ասէ . Թոյլ տուք մանկտւոյդ գալ
առ իս , և մի արգելուք զդոսա . զի այդ-
պիսեաց է արքայութիւն այ :



Ամէն

Ամէն ասեմ ձեզ․ որ ոչ ընկալցի զար-քայութիւն Ա՟յ իբրեւ զմանուկ՝ ոչ մտցէ ի նա ։ Եւ առեալ զնոսա ի գիրկս՝ ձեռն եդ ի վերայ՝ եւ օրհնեաց զնոսա ։

Քարոզ ։

Վ՟ս դառնալոյ մեզ զխորհս եւ զողորմութիւն ի բարերար Տեառնէ մերմէ , զՏ՟ր աղաչես″ ։

Վ՟ս փրկելոյ զմեզ ի զրպարտութենէ մարդ-կան՝ եւ յորոգայթից սատանայի , զՏ՟ր ա″ ։

Վ՟ս ամ՟ անձանց քրիստոնէից , եւ տանց հաւատացելոց , զՏ՟ր ա″ ։

Վ՟ս որք ի լերինս յայրս եւ ի փապարս բնակեալ են սուրբ հարքն մեր , զՏ՟ր ա″ ։

Վ՟ս որք սաղմոսիւք եւ օրհնութեամբ կատարեն զամ՟ ժամանակս կենաց իւրեանց , զՏ՟ր ա″ ։

Վ՟ս հոգւոյն″ ։ Եւ եւս″ ։ Զան″ ։ Ողոր″ ։

Եւ ընթեռնու հայրապետն զաղօթս զայս ի վերայ մանկանն ։

Տ՟ր ողորմեա․ Տ՟ր ողորմեա․ Տ՟ր ողորմեա ։

ՏՐ Ա՟Ծ ամենակալ՝ հզօր եւ բազմա-գութ եւ պահպանիչ ամ՟ եղելոց՝ զորս



յոչնչէ

յոչնչէ գոյացուցեր․ և քոյով բարեխնամ գթութբ կառավարես ամ արարածք յերկինս և յերկրի․ և ի քոյ ամենազօր հրամանաց՝ ունիլ բնաւորեցան համայն տեսակքն անձողական բնութեց զանազան և զբազմանալն ։

Տէր ամենակալ՝ դու արարեր հօր ազգաց բազմաց զնախնին նահապետն, և զանբեր և զանպտուղ արգանդն սառայի՝ անձնայի և եղիսաբեթի օրհնեցեր ի բեղմնաւորութիւն, և շնորհեցեր նոց զզաւակունս օրհնեալս առ ի քէն և անուանեալս ի մէջ ժողովրդեան քո իսրայէլի ։

Եւ արդ՝ տէր ած մեր բարերար, աղաչեմք զքեզ, զի ընկալցիս ողորմութբ քով զբանաւոր նուէրս ծառայից քոց՝ իբրև զանդրանիկս ժողովրդեան քո իսրայէլի․ վասն զի ամ տուրք բարիք և ամ պարգևք կատարեալք ի վերուստ առ ի քէն շնորհին աղբեր մարդկան․ և մարդասիրութբ քով հաճեցար ընդունել ի մարդկանէ



զպտուղ

զպտուղ սիրոյ՝ զհունձերս ՚ի փառս ամենա-
սուրբ անուան քո . քանզի դու ես որ ա-
մենատատ բարերար , որ տաս և ընդու-
նիս . մի՛ որոյ և ծնողք մանկանս այսորիկ
հաստատեալ՝ յուսով՝ և ջերմեռանդ սիրով
ընծայամատոյց լինին ապէնիազ սրտաչեղ-
զպտուղ որովայնի իւրեանց՝ զգերնապար-
գև մանուկս զայս . և մեք ամենեքեան
միաբան ուխտիւք աղաչեմք զքեզ տէ՛ր
ած մեր , զի ընկալցիս զսա ՚ի գիրկս խնա-
մոց քոց՝ որպէս երբեմն ընկալար զմանկտին ,
և ձեռն եդեալ օրհնեցեր զնս . օրհնեա՛ ※
և այժմ զսա ամենակարող աջովդ քով
սրբով . որով լցցի՛ շնորհօք սբ հոգւոյդ , զի
դու ես ած և փրկիչ մեր , և քեզ վայելէ
փառք և պատիւ , այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից . ամէն :

Խաղաղութիւն ամենեցուն :

Մարդասէ՛ր ած բարերար՝ ընկա՛լ զաղա-
չանս ծառայից քոց , և օրհնեա՛ ※ ( այս անուն ) ,
զոր շնորհեցեր միջնորդութեամբ սբ առաքե-


լոց

լոյն Յակոբայ, որ վասն անուան քո սրբոյ ընկալաւ զբաժակս չարչարանաց և մահու, և պահեա զսա անփորձ յամենայն արկածից չարին ի փառս մեծի անուան քո սրբոյ, և ի սփոփանս ծնողաց սորին՝ որք հաւատով դիմեալ յողորմութի քո՝ ընկալան ըզպտուղս զայս ։

Օրհնեա տէր և զբանաւոր անդաստանս քո զայսոսիկ՝ պտղաբեր լինել ի փառս քո ըստ ամլացելոյ արգանդին աննայի, որ եօթնեակ զաւակօք բարգաւաճեցաւ ։

Ընկալ տէր ած՝ զդուզնաքեայ պարգևս զայս, ի ձեռաց սոցին՝ փոխանակ պտղոյ որովայնի իւրեանց, զոր օրինակ ընկալար զնորաստեղծ խոյն փոխանակ իսահակայ . և աստեղաթիւ զաւակօք արարեր հայր ազգաց բազմաց՝ ըստ հաւատարմութեն աբրահամու սիրելւոյ քո . և օրհնեցեր զզաւակն պտղաբերական ։

Օրհնեա ※ տէր և զտղայս զայս նուէրն օրհնութբ կրկին մեծաւ ի կեանս երկարս անփորձ

 ի

ի չարեաց , և ի տղայական պատահարաց . զօրացո՛ զսա ի վարս առաքինութե և յամ գործս բարեաց . լցո՛ զսա պարգևօք հոգւոյդ սբյ՝ զօրանալ զօրութե ի զօրութի , և շնորհաց ի շնորհս . և պահեա՛ զսա ո̄ղ և անարատ յամս մշ̄ փառաց անուան քո . որպէս զի ըստ կամաց քոց բարգաւաճեալ յայսմ աշխարհի՝ արժանաւոր լիցի յաւիտենական և երկնային կենաց ընդ սուրբս քոյ . զի դու միայն ես բազումողորմ , և քեզ վայելէ փառք և իշխանութի և պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Ըպա՝ Բարոդ , Մ̄է խաչիկս" ։ Ըզօլթք , Պաշպա" ։

# ԽՐՀԴ

## ՎԵՐԱՑՄԱՆ ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

Յաւուր շաբաթու նաւակատեաց տ̃նի խաչին․ յա-ռաջ քան զերեկոյի ժամն, աւագ լուսարարն դնէ արծաթեայ պատուանդանաւ զՏ̃ր խաչն, որ ունի զնշան ի խաչափայտէն ի ս̃բ Գլխադիրն, և զար-դարէ զնա ռեհանով, և ծածկէ պատուական կը-տաւով։ Եւ զկնի երեկոյեան ժամու․ շուրջառով, խնկօք, և մոմեղինօք, ի ս̃բ Գլխադիրն պատրաս-տին երթալ։ Սարկաւագն՝ Եւ ևս խաղաղութ̃ե զ՚՚։ Հայրապետն՝ Օրհնութի̃ և փառք Հօր և Որդւոյ՚՚։ Քահանայն շարական․ Զօրութի̃ սուրբ խաչի՚՚։ Զկնի Սաղմոս․ Նշանեցաւ առ մեզ լոյս երե՚՚։ Եւ Հայրապետն ընթեռնու զաւետարանն Յօհան՚՚։ Եւ նոքա առեալ տանէին զնա՚՚։ Եւ յաւարտին՝ Սարկաւագն քարոզեսցէ․ Աղաչեսցուք զկենաւ՚՚։ Աղօթք․ Ընկա՛լ առա՚՚։ Քահանան․ Առաջի պատ՚՚։ Սարկաւագն․ Եւ ևս խաղաղութ̃ե զՏ̃ր ազա՚՚։ Հայրապետն՝ Օրհնութի̃ և փառք Հօր և Որդւոյ՚՚։ Եւ ապա բառնայ Հայրապետն բացաւ գլխով զՏ̃ր խաչն՝ և գնան յաւագ Սեղանն՝ ասելով Շարական․ Նշանաւ ամե՚՚։ և տարեալ դնէ Հայրապետն զՏ̃ր խաչն ի ս̃բ Սեղանն ի վերայ պատուանդանի իւրոյ։ Զկնի Երթին։ Աւետարան Ե̃ Մատ՚՚․ Զի ով փայ՚՚։

Եւ



Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՊԵՏ... ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А ... Библиотека 7/XI 1922 ИМЕНИ А. МЯСНИКЯНА Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
20110 / 1005

Եւ յաւարտին՝ քառասուն Տէր ողորմեա՛, ձայնիւ
ի ծունկս անկեալ ։ Քարոզ, Սբ Խաչիւս աղաչ՛ ։
Աղօթք․ Պահպանեա՛ ։ և արձակեն զժողովուրդն ։
Եւ դասատաս շարակարգեալ երգելով շարական․
Որ զանարատ՛ ։ գնան առաջի Սրբազան Պատրիար-
գին ի պատրիարգարան ։ Սբ Խաչի՛ ։ Պահպանիչ՛ ։
և արձակին խաղաղութբ ։ Զկնի եկեղեցեին հսկումն ։
Միւսակի զկնի որ Պատարագին շարականաւ տանին
ի պատրիարգարան․ դարձեալ Պահպանիչ ։



Ք͞ս Յ͞ս՝ որ տարածեցեր զա֊
մենազօր բազուկս քո ՚ի խաչին
՚ի փրկու͞ն ազգի մարդկան · ա֊
ռաքեա՛ զքո զողորմութ͞իդ ՚ի
պաշտօնեայս և յերկրպագուս ։

Հաւաթ երեկոյ ընկէր ժամերգութ , Սարկաւագն ի ձայն ասէ · Եւս եւս խա'': Քահանայն՝ Օրհնու'':
և երթան ի մէջ Գաւթին պարուտեալ յաջմէ և յահեկէ դրան շարագաս՝ ասելով շարական զԾ :

Զօրութի սբ խաչի քո քս · որ կանգնեցեր ի փրկութի աշխարհի · սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութէ :

Բանիզի ի սմա բարձրացար տէր · և ի սմա հեղեր ըզպատուական սբ զարիւնդ · սա : Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստդ նը- շանաւ խաչի քո ցուցեր աշխարհի · սա :

Օրհնի Տէր'' աւէ'' · Նշանեցաւ : և Քահանայն :

Սէյ Աւետարանիս Յսի Քսի որ ըստ Յոհաննու :

Մն չարչարանաց տն մերոյ Յսի Քսի :

Եւ նոքա առեալ տանէին զնա · և բար- ձեալ էր ինքնին զխաչափայտն · և ելանէր ի տեղին՝ որ անուանեալ էր գագաթն · և կոչիւր եբրայեցերէն գողգոթա : Ուր և ի խաչ հանին զնա : և ընդ նմա

նմա երկուս ևս այլս աստի և անտի , և ի մէջն զյս̅ :

Գրեաց և տախտակ մի պիղատոս , և եդ ի վերայ խաչին . և էր գրեալ յս̅ նազօրեցի , թագաւոր հրէից :

Զայն տախտակ ընթերցան բազումք ի հրէից . զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն յս̅ . և էր գրեալ եբրայեցերէն , դաղմատերէն , և յունարէն :

Ասեն ցպիղատոս քահանայապետքն հրէից . մի գրեր թագաւոր հրէից . այլ թէ նա ասաց՝ թագաւոր եմ հրէից :

Պատասխանի ետ պիղատոս . զոր ինչ գրեցի՝ գրեցի :

Սարկաւագն քարոզէ :

Աղաչեսցուք զկենսատու փրկիչն մեր քս̅ , որ կամաւոր խաչելութեն իւրով զարարածս փրկեաց . և հեղմամբ արեան իւրոյ՝ ընդ թողութիւն շնորհեաց յուսացելոց իւրոց : ամենակալ տր̅ ած̅ մեր կեցո և ողորմեա :

 Աղօթք

## Աղօթք ։

Ընկալ առաջի քո բարերար և բազումողորմ Աստուած, աղաչեմք ամենայն սրտիւք մերովք և խնդրեմք զգթութիւն ի քէն. որ խոստացար ծառայից քոց և ասացեր. զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ ի հօրէ, տացի ձեզ ։ Շնորհեա՛ և այժմ հաւատացելոցս ի քեզ՝ և կատարեա՛ ի բարի զխնդրուածս մեր. զի ի քեզ եմք ապաւինեալ ։ Եւ քո առատ ողորմութեամբ մխիթարեա՛ զմեզ ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո՛ յանճառ երկնից արքայութիւնդ ի փառաբանութիւն և ի պատիւ ամենասուրբ երրորդութեանդ ։ այժմ և միշտ՚ ։

## Ժամամուտ ։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քո անկանիմք երկրպագելով և խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց. քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան ։ Եւ այժմ վասն սորա աստուածային քո



նշա

Նշանի շնորհեա՛ զերկնային զխաղաղութիւն ընդ-
ա̃մ աշխարհի ։

Ապա բանայ Հոյլապետն բացագլխով զտուփըն խաչին, և տարեալ յառաջ խորանն՝ դնէ ի մը Սեղանն ի վերայ պատուանդանին՝ ասելով շարական այս ։

Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քս ·
պահպանեա՛ զմեզ մարդասէր յաներևոյթ թշնամւոյն · զի դու միայն ես թագաւոր
փառաց օրհնեալ յաւիտեան ։

Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո՝ և հեղեր զարիւնդ ի փրկու̃ն տիեզերաց · զի դու միայն ։

Ի միւսանգամ քո գալստեանն յերևիլ ն̃ր Նշանիս · արժանի արա ըղձառայս քո վերբստին նորոգման · զի դու ։

Որթին ։

Այս Աւետարանիս Յովհ. Ոսկի որ ը̅ Մատթէոսի ։
Տէրն մեր Յս Քս ասէ ։

Զի ո՞չ փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի
գալուստն որդւոյ մարդոյ ։



զի

Զի ուր գէշն իցէ, անդ ժողովեսցին
արծուիք ։

Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի. և լուսինն ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին ։

Եւ ապա երևեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս. և յայնժամ կոծեսցին ամ՟ ազգք երկրի. և տեսցեն զորդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութ՟ և փառօք
բազմօք ։

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ. և ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչև
ի ծագս նոցա ։

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նր՟ ոստքն կակղասցին, և տերևն ցցուիցի, գիտէք թէ մերձ է ամառն ։

Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամ՟, գիտասջիք թէ մերձ է առ դուրս ։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս



այս

այս՝ մինչև այս ամենայն եղիցի ։
Երկինք և երկիր անցցեն . և բանք իմ
մի՛ անցցեն ։

·Քարոզ , Ամէն խաչիւս ա՛ ։ Ողորմ.ք , Պահպանեա՛ ։
Ըստ Սարկաւագն՝ Եւ ես խաղաղութե՟ զանէր ա՛ ։
Հայրապետն՝ Օրհնութի՟ և փառք Հօր և որդւոյ՛ ։
և դնան շար ՚ի շար առաջի Սրբազան Պատրիարգին
՚ի պատրիարգարան՝ առեալ շարական , Որ զանա՛ ։
Ամ խաչիւն՛ ։ Պահպանիչ՛ ։

Կիրակի , Նախ քան զերեկոյեան ժամերգութ̄ի · զգեստաւորի Պատրիարգն , և երկու վարդապետք զգենուն զօտեւորեալ՝ 'ի բառնալ սկտեղբ զսուրբ Խաչն · իսկ այլքն՝ շուրջառաւ զարդարեալ եր-թան յաւագ խորան՝ ասելով շարական զծ̃ :

Որ ծագեցեր մեզ լոյս մեծ ընդհանուր յաղ-թու̄ե խաչի քո Թագաւոր յաւիտենից · և ետուր պարիսպ ամրու̄ե հաւատացելոց քոց · աշտարակ հզօր յերեսաց թշնա-մւոյն · աղաչեմք ըզքեզ տէր պահպանեա՛ ըզմեզ ընդ հովանեաւ խաչի քո սբ̃ :

Սա՛ պըսակ զարդարեալ 'ի շնորհաց իմա-նալի լուսոյն · և եդեալ 'ի գլուխ մեղու-ցելոյն · վայելուչ երանգօք ներկեալ ար-եամբ և ջրով · 'ի տիգախոց կողէդ զոր 'ի զինաւորէն ընկալար · աղաչեմք :

Որ զանդունդըս մեղաց ծովուն սովաւ բաժանեցեր · և ըզբռնաւորքն ծածկե-ցեր խորոքըն յաւիտենական հրով · հա-ներ ըզժողովուրդըս քո 'ի բնակու̄թս երկ-նից անկեալ զօրացն · աղաչեմք :

Ապա խնկարկէ Հայրապետն և ընթեռնու զԱղօթս։

Տ՟Ր ա՟ծ մեր՝ որ կարգեցեր յերկինս ըզդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց, ի սպասաւորութիւն փառաց քոց։ Արա այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց. և լինել պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ։

Զի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս. ամէն։

Սարկ. Բարձր արարէք զՏ՟ր ա՟ծ մեր. երկիրպագէք պատուանդանի ոտից նորա, զի ս՟բ է։

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս։

Զի ճառ խաչին, կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն ա՟յ։

Զի գրեալ է, կորուսից զիմաստութիւն իմաստնոց. և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից։

Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր, ո՞ւր քննիչ



աշ

աշխարհիս այսորիկ . ոչ ապաքէն յիմարե-
ցոյց Ած զիմաստութի աշխարհիս այսորիկ ։
Քանզի իմաստութեն Այ ոչ ծանեաւ աշ-
խարհ իմաստութեն զԱծ . հաճեցաւ Ած՝
յիմարութբ քարոզութեն՝ ապրեցուցանել
զհաւատացեալս ։

Իսկ որովհետեւ հրէայք նշան հայցեն .
և հեթանոսք զիմաստութի խնդրեն . մեք
քարոզեսցուք զխաչելեալն Քս , հրէից գայ-
թակղութի . և հեթանոսաց յիմարութի ։
Բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հե-
թանոսաց՝ զՔս , Այ զօրութի և Այ իմաստութի ։

Ալէ՛՛ ալէ՛՛ . Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց .
և ետուր ուրախութի սրտից մերոց ։

Որթիւ ։

Սբ Աւետարանին Յսի Քսի որ ըստ Յօհաննու ։
Տէրն մեր Յս Քս ասէ ։

Հայր՝ հասեալ է ժամ , փառաւորեա զոր-
դի քո , զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ ։
Որպէս ետուր նմա իշխանութի ամ մարմ-


նոյ

նոյ . զի ամե , զոր ետուր նմա , տացէ ըզ

կեանսն յաւիտենականս :

Այս են յաւիտենական կեանք , զի ծա-
նիցեն զքեզ միայն ճշմարիտ ած . և զոր
առաքեցեր զյս քս :

Ես զքեզ փառաւորեցի յերկրի . զգործն
կատարեցի , զորս ետուր ցիս՝ զի արարից .
Եւ այժմ փառաւորեա՛ զիս հայր , առ 'ի
քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան ըզ
լինելն աշխարհի առ 'ի քէն :

Յայտնեցի զանուն քո մարդկան , զորս ե-
տուր ինձ յաշխարհէ . քո էին , և ինձ ե-
տուր զնոսա . և զբանն քո պահեցին :

Արդ գիտացին , եթէ զամ ինչ՝ զոր ե-
տուր ինձ , առ 'ի քէն են :

Զի զբանն՝ զոր ետուր ինձ , ետու նց .
և նոքա ընկալան , և ծանեան ճշմարտութ՝
թէ առ 'ի քէն ելի . և հաւատացին՝ ե-
թէ դու առաքեցեր զիս :

Արդ՝ ես վասն նոցա աղաչեմ , և ո՛չ վասն
աշխարհի աղաչեմ . այլ վասն նոցա՝ զորս

ետուր ինձ՝ զի քո են ։

Եւ որ ինչ իմ է՝ ամ քո է · և որ ինչ քո է՝ այն իմ է · և փառաւորեալ եմ 'ի նսա ։ Եւ ես ոչ ևս եմ յաշխարհի՝ և նոքա յաշխարհի են, և ես առ քեզ գամ ։ Հայր սբ, պահեա զնոսա յանուն քո, որով ետուր ինձ · զի եղիցին մի, որպէս և մեք մի եմք ։

Ս[ուր]բ Ա[ստուա]ծ, ս[ուր]բ և հզօր, սուրբ և անմահ · երիցս կրկնեն · և ապա, որ խաչեցար վ[աս]ն մեր ողոր[մեա] ։ Եւ Հայրապետն խնկարկեալ բարձցէ զսբ խաչն ռահանով · և երթան 'ի կողմն հարաւոյ · յաջմէ և յահեկէ դրան սբ էջմիածնի, պարառեալ շուրջ դաս կանգնին · ասելով շարական զէ ։

Ով պահապան որ ծագեցար յեդեմայ · նշան յաղթութեան ընդդէմ աներևոյթ թշնամեաց ։

Որ փակելոյ դրախտին բացող և առաջնորդ աւազակին · որ զբոցեղէն սուրըն կապտեաց անեղին հրամանաւ ։

Քև ցընծան ըստորայինքս ամ 'ի միասին



գամ

գամ քո գալըստեանն․ և յաւէժ ըղձուար_ ճանան դասք անմարմնոցն առ էիցս ։

### Օ՟հնի՟ Որթին ։

Մէջ Աւետարանիս Յ՟ի Ք՟ի որ ըստ Յօհաննու ։

Տէրն մեր Յ՟ս Ք՟ս ասէ ։

Եւ ոչ ո՛ք ել յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ որդին մարդոյ, որ էն յերկինս ։

Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յա_ նապատի, նոյնպէս բարձրանալ պարտ է որդւոյ մարդոյ ։

Զի ա՟մ, որ հաւատայ ՚ի նա՝ ո՛չ կորիցէ․ այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս ։

Զի այնպէս սիրեաց ա՟ծ զաշխարհ՝ մինչև զորդին իւր միածին ետ․ զի ա՟մ որ հա_ ւատայ ՚ի նա, մի՛ կորիցէ՝ այլ ընկալցի ըզ_ կեանս յաւիտենականս ։

Զի ո՛չ առաքեաց ա՟ծ զորդի իւր յաշ_ խարհ՝ թէ դատեսցէ զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ ։

Որ հաւատայ ՚ի նա, ո՛չ դատապարտեսցի․



և

և որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն իսկ դա-
տապարտեալ է . զի ոչ հաւատաց յանուն
միածնի որդւոյն այ ։

Եւ այս իսկ է դատաստան . զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս . զի էին գործք իւրեանց չարութե ։

Զի ամ որ զչար գործէ՝ ատեայ զլոյս . և ոչ գայ առ լոյսն , զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա ։

Իսկ որ առնէ զճշմարտութի՛ գայ առ լոյսն , զի յայտնի լիցին գործք նորա , թէ ած գործեցան ։

Սարկաւագն քարոզեսցէ ։

Վս ամ բարեպաշտ թագաւորաց քրիստոնէից , զօրաց և զաւակաց նց . անդորրապէս վարելոյ զկեանս իւրեանց . զտր աղա՛ ։

Վասն կարողութե և յաղթութե ամ թշնամեաց , բարբարոսաց , և չարափառաց , և զօրանալոյ յամ գործս բարեաց . զտր աղա՛ ։



Եւ

Եւ ասասցէ հայրապետն քառասուն Տէր ողորմեա։
Ապա Օրհնեա տէր։ Եւ հայրապետն բարձրացուցեալ զխաչն՝ տեառնագրէ ասելով։

Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցէ հիւսիսային կողմ աշխարհիս. որք Աթոռս, քաղաքս, և ամ̃ հաւատացեալք՝ որք ի քաղաքս և ի գիւղս են բնակեալք, և ի բաց փարատեսցին յամենայն մարդկանց հիւանդութիւնք ցաւք, մահտարաժամ և ամ̃ չար պատահմունք։ Եւ յաջողեսցի ճանապարհորդութի տրոունական ուխտաւորաց մերոց, որք ընդ ծով, և ընդ ցամաք դիմեալ գան, խաղաղութ̃ է հասանիլ ի սուրբ Աթոռս, և ննջեցելոց մերոց զերկնից արքայութի̃ն պարգևեսցէ։ Ածս Աշխանաւ որ Խաչիւն՝ և որ Աւետարանաւս, և աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զկնի՝ Սուրբ ած, երկիցս կրկնելով. երթան ի կողմն արեւելից. յառեան առաջի բեմին պարառել յաջմէ և յահեկէ դասադասն՝ ասելով շարական զն:

Փառք կենաց որ փոխանակ մահացու պտղոյն զքս պտղաբերեցեր. պարսպեալ պահեա զուխտս հաւատացելոց:

Որ բացաւ մեզ ճանապարհ ծառոյն կենաց. ի սրովբէական պահպանութէն. պարսպեալ:

Որ ազատեցաւ նախահայրն ի ճաշակմանէ պտղոյն. և քեզ երկրպագեն ամ հաւատացեալք. պարսպեալ:

Օրհնի: Խաղաղութի ամենեցուն:

Սրբյ Աւետարանին Յսի Քսի որ ըստ Մարկոսի:

Փառք չարչարանացն տն մերոյ Յսի Քսի:

Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարին քահանայապետքն հանդերձ ծերովքն և դպրօքն՝ և ամ ատեանն, կապեցին զյս, և տարան մատնեցին պիղատոսի:

Եհարց զնա պիղատոս և ասէ. դու ես



թա

Թագաւորն Հրէից ։ Նա պատասխանի ետ
նմա և ասէ՝ դու ասես ։

Եւ չարախօսէին զնմանէ յոյժ քահանայա-
պետքն . և նա ոչինչ տայր պատասխանի ։

Իսկ պիղատոս դարձեալ հարցանէր զնա .
ոչինչ տաս պատասխանի . տե՛ս՝ քանի՜ ամ-
բաստանեն զքէն ։

Եւ յիսուս այնուհետև ոչինչ ետ պատասխա-
նի . մինչև զարմանալ յոյժ պիղատոսի ։

Բայց ըստ տօնի արձակէր նոցա զմի որ կա-
պեալ . զոր ինքեանք խնդրէին ։

Եւ էր՝ որում անուն էր Բարաբբա՝ կա-
պեալ ընդ խռովիչսն , որոց ընդ խռովելն՝
զայր մի սպանեալ էր ։

Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամբո-
խըն և խնդրել՝ որպէս սովոր էր . զի արձա-
կեսցէ նոցա զԲարաբբայն ։

Պատասխանի ետ պիղատոս և ասէ ցնոսա .
կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից ։

Քանզի գիտէր թէ առ նախանձու մատ-
նեցին զնա քահանայապետքն ։



Որք

Որք և զամբոխն հաւանեցուցին՝ զի ար-
ձակեսցէ նոցա զԲարաբբայն ։

Դարձեալ պատասխանի ետ պիղատոս և
ասէ ցնոսա . Իսկ զի՞նչ կամիք թէ արարից
զարքայն հրէից ։

Եւ նոքա դարձեալ աղաղակէին՝ յուզելք
ի քահանայապետիցն , ի խաչ հան զդա ։
Ասէ ցնոսա պիղատոս . զի՞նչ ինչ չար ա-
րարեալ իցէ դորա . և նոքա առաւել ևս
աղաղակէին և ասէին . ի խաչ հան զդա ։
Իսկ պիղատոս իբրև զմիտս կամեցաւ հա-
ճել զամբոխին , արձակեաց նոցա զԲարաբ-
բայն . և զյս՟ գան հարեալ ետ ի ձեռս ,
զի ի խաչ ելանիցէ ։

Սարկաւագն քարոզեսցէ ։

Ա՟ պայծառութ՟ քրիստոնէից՝ և սէր հա-
ւատոյս մերոյ Լուսաւորչին , և զօրանալոյ
բարեպաշտ իշխանացն մերոց յամ՟ գործս
բարեաց , պահելով զնոսա՝ և զորդիս նոցա
ընդ հովանեաւ զօրութ՟ սբյ Խաչիս , և
առա

առաքելական սբյ Աթոռոյս հաստատութեն և պայծառութեն, և յամենեցունց աղա-տութեն, և եղբայրութես մերոյ անքակտելի սիրոյ միաբանութեն. զոր աղաչեսցուք ։

Եւ ասասցէ Հայրապետն քառասուն Տէր ողորմեա ։ Ապա Օրհնեա տէր ։ Եւ հայրապետն բարձրացու-ցեալ զձեռն Խաչին՝ տեառնագրէ ասելով ։

Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախ-նամեալ պահեսցի առաքինեան կողմ աշ-խարհիս, Թագաւորաց հաշտութի, Եկե-ղեցեաց հաստատութի, և որ Հաւատոյս մերոյ պայծառութի, աղօթելով յամէն չար հերձուածոց ։ Այս Նշանաւ որ Խա-չին՝ և որ Աստուածածնաւս, և աւուրս շնորհիւ. անուամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից, ամէն ։

Զկնի՝ Սուրբ ած , երկիցս կրկնեալ . երթան ՚ի
կողմն արեւմտից . յաջմէ եւ յահեկէ աւագ դրան ե-
կեղեցւոյ շարադաս կանգնին՝ ասելով շարական ած :

Որ զանապատ բազումկիրս քո ՚ի խաչին տա-
րածեցեր քս ած . եւ նշան յաղթութե ե-
տուր մեզ . սովաւ ըզկեանս մեր պահեա՛ :
Որ զաշխարհահակեցոյց բազկս տարածութի
խաչի քո քս ած . գաւազան զօրութե ե-
տուր մեզ . սովաւ :
Որ ըզմեռեալսն ՚ի ճաշակմանէ փայտին
յանցանաց . կենաց փայտիւըն կենդանա-
ծեցեր . սովաւ :

Որթիւ : Խաղաղութի ամենեցուն :
Մեյ Աւետարանիս Յսի Քսի որ ըս Մատթէոսի :
Տէրն մեր Յս Քս ասէ :

Զի որպս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ եւ
երեւի մինչեւ յարեւմուտս , այնպէս եղիցի
գալուստն որդւոյ մարդոյ :
Զի ուր գէշն իցէ , անդր ժողովեսցին
արծուիք :
Վաղվաղակի յետ նեղութե աւուրցն այնո-


ցիկ

ցին՝ արեգակն խաւարեսցի · եւ լուսինն ոչ
տացէ զլոյս իւր , եւ աստեղք անկցին յերկ-
նից , եւ զօրութիւնք երկնից շարժեսցին ։

Եւ ապա երեւեսցի նշան որդւոյ մարդոյ
յերկինս · եւ յայնժամ կոծեսցին ամ՟ ազգք
երկրի · եւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ
ի վերայ ամպոց երկնից զօրութ՟ եւ փառօք
բազմօք ։

Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով
մեծաւ · եւ ժողովեսցեն զընտրեալս նորա
ի չորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ
ի ծագս նոցա ։

Ի թզենւոյ անտի ուսարուք զառակն · զի
յորժամ նր՟ ոստքն կակղասցին , եւ տերեւն
ցցուիցի , գիտէք թէ մերձ է ամառն ։

Այնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս
ամ՟ , գիտասջիք թէ մերձ է առ դուրս ։

Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս
այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի ։

Երկինք եւ երկիր անցցեն · եւ բանք իմ
մի՛ անցցեն ։

Սարկաւագն քարոզեսցէ ։

Վս Հայրապետին մերոյ Տն (այս անուն) Սրբազան Կաթուղիկոսի, և մեր Աթոռոյս Պատրիարքի Տն (այս անուն) Արքեպիսկոպոսի, և վս ամ պանծալի Եպիսկոպոսաց, ածաբան վարդապետաց, երախտաւոր Եուէրականաց, պատուական Քահանայից, մաքրասուն Սարկաւագաց, քաղցրանուագ Դպրաց, աշխատասէր Միաբանից, վաստակաւոր Մշակաց, և ընդհանուր ամ Մանկանց Եկեղեցւոյ․ զՏր աղաչեսցուք ։

Եւ տացէ Հայրապետն քառասուն Տր ողորմեա՛ ։ Ապա Օրհնեա՛ տր ։ Եւ Հայրապետն բարձրացուցեալ զսբ խաչն՝ տեառնագրէ ասելով ։

Օրհնեսցի և պահպանեսցի, և նախախնամեալ պահեսցի արևելեան կողմ աշխարհիս, Քահանայապետութի Կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցւոյ Հայաստանեայց և Վարդապետական



իշխա

իշխանութեն, Քահանայիւք, Սարկաւա-
գք, Դպիրք, և սբյ Աթոռոյս աշխա-
տաւորք, և ամ ուխտին լրմամբ՝ սրբու-
թեամբ պաշտել զՀաւատս անբիծս.
Ամս Նշանաւ սբ Խաչիւն՝ և սբ Աւե-
տարանաւն, և աւուրս շնորհին. անուամբ
Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Զինի՝ Սուրբ եմ, երկիցս կրկնեալ․ երթան ի կողմն հիւսիսոյ․ յաջմէ և յահեկէ դրան ՚նը սուր‿ փանննոյն դասադաս կանգնին՝ ասելով շարական բէմ :

Խաչըն կենսաբար որ եղև ըզմեզ փրկութի․ սովաւ ամենեքեան ըզքեզ բարեբանեմք :

Որ ի հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկիր․ և զաւազան զօրութե հաստատա‿ ցելոց․ սովաւ :

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառա‿ պէս ըզմեզ ցուցաւ․ ի յօգնութի ընդդէմ թշնամեացն․ սովաւ :

Որթին : Խաղաղութի ամենեցուն :

Սրբյ Աւետարանին Յսի Քսի որ ըստ Յովհաննու :

Տէրն մեր Յս Քս ասէ :

Մի խռովեսցին սիրտք ձեր․ այլ հաւա‿ տացէք յԱծ, և յիս հաւատացէք :

Ի տան հօր իմոյ օթևանք բազում են․ ապա թէ ոչ՝ ասացեալ էր իմ ձեզ․ թէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի :

Եւ եթէ երթամ, և պատրաստեմ ձեզ տեղի․ դարձեալ գամ, և առնում ըզ



ձեզ

ձեզ առ իս . զի ուր եմն իցեմ , և դուք
ընդ իս իցէք ։

Եւ ուր երթամն գիտիցէք . և զճանա-
պարհն գիտիցէք ։

Ասէ Թովմաս . տէր՝ ոչ գիտեմք , յո՞ եր-
թաս . և զիա՞րդ զճանապարհն կարաս-
ցուք գիտել ։

Ասէ ցնա Յս̅ . ես եմ ճանապարհ և ճշ-
մարտութի̅ և կեանք . ոչ ո՛ք գայ առ հայր՝
եթէ ոչ ինև ։

Եթէ զիս գիտէիք՝ ապա և զհայրն իմ
գիտէիք . և այսուհետև գիտասջիք զնա ։

Ասէ ցնա փիլիպպոս . տէր , ցո՛յց մեզ զհայր՝ և շատ է մեզ ։

Ասէ ցնա Յս̅ . այսչափ ժամանակս ընդ
ձեզ եմ , և ո՞չ ծանեար զիս փիլիպպէ .
որ ետեսն զիս , ետես զհայրն . և դու զի-
ա՞րդ ասես՝ եթէ ցո՛յց մեզ զհայր ։

Ո՞չ հաւատաս , եթէ ես ի հայր , և հայր
յիս է . զբանս , զորս ես խօսիմ ընդ ձեզ ,
ո՛չ եթէ յանձնէ իմէ խօսիմ . այլ հայրն ,


որ

որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն ։ Հաւատայք ինձ, եթէ ես ի հայր, և հայր յիս է ։

Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գործոցն հաւատացէք ինձ ։ ամէն ամէն ասեմ ձեզ. թէ որ հաւատայն յիս, զգործսն՝ զորս ես գործեմ, և նա գործեսցէ. և մեծամեծս ևս քան զնոյնս գործեսցէ. զի ես առ հայր երթամ ։

Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն իմ, արարից զայն. զի փառաւորեսցի հայր յորդի ։ Եթէ զոր ինչ խնդրիցէք յինէն՝ արարից զայն ։

Սարկաւագն քարոզեսցէ ։

Վս՟ խաղաղութե՟ ամ՟ աշխարհի՝ և հաստատութե՟ սբ՟յ Եկեղեցւոյ, և ամ՟ Քրիստոնէից. յերեւելի և յաներեւոյթ թշնամեաց, և ի փորձանաց. փրկութե՟, քաւութե՟, և թողութե՟ ամենեցուն ։ Հաստատելոյ ի Հաւատ, ի Յոյս, և ի Սէր, և յամ՟



գործս

գործս բարեաց , և արժանաւոր լինելոյ
արքայութեան երկնից , և յաւիտենից կենա-
ցըն · զոր աղաչեսցուք :

Եւ ասասցէ Հայրապետն քահանայն Տէ ողորմեա՛ :
Ապա Օրհնեա՛ տէր : Եւ Հայրապետն բարձրացու-
ցեալ զՏէր խաչն՝ տեառնագրէ ասելով :

Օրհնեսցի և պահպանեսցի , և նախախ-
նամեալ պահեսցի հաւատալքն կողմ աշ-
խարհիս , գաւառք՝ և անդաստանք ի պտ-
ղաբերութենէ , և բարձցին ամ հարուածք
և բռնութիւնք չարին : Այս Նշանաւ սբ
Խաչիւս՝ և սբ Աստուածածնաւս , և ա-
ծուրս շնորհիւ · անուամբ Հօր և Որ-
դւոյ և Հոգւոյն սրբոյ · այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից · ամէն :

Եւ ապա երթիցեն յատեան դասակարգ՝ ասելով
շարական բն :

Ի գալստեան տեառն դրունք երկնից
բացին . և ճառագայթիւք անճառ լուսով
ոչ խաւարն երևի :
Յերևաց տեառն լերինք հալչին . և ի
յահէ փառաց նոր շարժին զօրութք :
Աւետեօք տեառն մեռեալք յառնեն .
և որք իմ անճառ փառօք զարդարին :

Եւ հայրապետն դիցէ զխաչն ի վերայ պատ-
ուանդանի իւրոյ . և ասասցեն Խաչի քո քս երկիր":
Եւ եթէ կամիցի հայրապետն ջուր օրհնել՝ օրհնէ .
և համառօտ իմն ծանուսցէ ժողովրդեանն զհրաշից
սբ խաչին , զգուշութբ մերձենալ ի նա : Օկնի՝
«Բարող , Սբ խաչիւս": Նշօլք , Պահպանիչ և":

# ԿԱՆՈՆ

## ՀՆՁԱՆ ՕՐՀՆԵԼՈՅ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ

Զկնի եկեղեցի ժամուն՝ տան շուրջառ ժամօրհնո-
ղին, սարկաւագն բուրվառաւ և զոյգ դպիր մոմե-
ղինօք առաջի նորա երթան միաբանութբ ի հնձանն
ի որ խաղի դրանեն՝ ասելով շարական զկ ։

Իլից զօրհնութըն մովսէսի՝ զոր խօսեցաւ ի
սինայի. եկեր ըզգառն օրինակին՝ և ըզ
բաղարջն ընդ եղեգին. ըզհինն ի նորս
փոխելով՝ զստուերն ի լոյս ճըշմարտելով.
փոխան գառինն ինքըն գոլով՝ գառն անձն
նուիրելով ։

Ընդ բաղարջին հաց անխմոր՝ ետ ըզմար-
մինն իւր զերկնաւոր. ըզկուսածինն ան-
սերմնաւոր՝ զանապականն և զհոգևոր.
ընդ ոչխարին արեանն ուխտին՝ ետ մեզ
զարիւնն իւր ուխտ կըրկին. և եղեգան
դառնացուցին՝ փոխան ըզփառս ծծայն ։

Թագաւորն արարածոց՝ զհացն կենաց
ետ քաղցելոց. և ըզբաժակն ուրախա-



րար

րար՝ որք յաղաւմայ տրտմեցելոց . այս նոր ուխտ է իմոյ արեան՝ փոխան հընոյ ուխտին արեանց . զոր յիշատակ իմ առնիցէք՝

մինչև եկից ես միւսանգամ :

Ժողովեալքս ՚ի քէն հայցեմք՝ ընդ ժողովեալ մետասանեին . որ զկենդանարարդ քո մարմինն՝ բաշխեալ ետուր ընդ բաժակին . շնորհեա և մեզ տէր ընդ նոսին՝ հաղորդ լինել քում սեղանին . կենաց հացիդ յոր փափագիմք՝ և ըմպելւոյդ ում ծարաւիմք :

Սաղմոս . ՚ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա :

Ընթերցուածս յառակաց :

Պատուեա զտ̃ր ՚ի քոց արդար վաստակոց . և հան նմա պտուղ ՚ի քոց արդարութ̃ն արմտեաց :

Զի լցցին շտեմարանք քո լիութ̃ ցորենոյ . և հնձանք գինեաւ քով առաւել ևս ըղխեսցեն :

Ընթերցուածս ի յովելեայ մարգարէ է ։

Քաջալերեա՛ց երկիր · խնդա՛ , և ուրախ լեր · զի մեծացոյց Տր̃ զառնել իւր ը̃ քեզ ։ Քաջալերեսցին երէվայրի , զի դալարեցան դաշտք անապատի · զի ծառ եբեր զպտուղ իւր · որթ և թզենի ետուն զզօրութիւն իւրեանց ։

Որդիք սիօնի ; ցնծացէ՛ք՝ և ուրախ լերուք ի Տր̃ ած̃ ձեր · զի ետ ձեզ Տր̃ կերակուր արդարութ̃ ։ և տեղասցէ ձեզ անձրև կանուխ և անագան իբրև զառաջինն ։ Եւ լցցին կալք ցորենոյ · և զեղցին հընձանք գինւոյ և իւղոյ ։

Եւ հատուցից ձեզ փոխանակ ամացն՝ զորս եկեր մարախն՝ և ջորեակն՝ և թրթուրն , զօր իմ մեծ՝՝ զոր առաքեցի ի վերայ ձեր ։

Եւ ուտելով կերիջիք՝ և յագեսջիք և օրհնեսջիք զանուն տն̃ այ̃ ձերոյ , որ արար ընդ ձեզ սքանչելիս · և մի՛ ևս ամաչեսցէ ժողովուրդ իմ յաւիտեան ։

Պօղոսի առաքելոյն ՚ի տիմոթէոսի առաջին թղթոյն
է ընթերցուածս ։

Այսուհետեւ մի՛ ջուր եւեթ ըմպիցես՝ այլ սակաւիկ մի եւ գինի խառնեսջիր՝ վասն ստամոքսի եւ ստէպ հիւանդութեց ։

Այն մարդք՝ որոց մեղքն յայտնի են՝ եւ յառաջագոյն հասեալ ՚ի դատաստան, եւ են՝ որոց զկնի երթան ։

Նոյնպէս եւ բարի գործքն յայտնի են. եւ որ այլազգ եւս ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն ։

Ալէ՛՛ալէ՛՛. Լցցուք մեզ ՚ի բարութենէ տան քո.
՚Սբ է տաճար քո սքանչելի արդարութբ ։

Որթի՛ ։ Խաղաղութի ամենեցուն ։

Ընթ Աւետարանն Յին Քի՝ որ ըստ Յօհաննու ։

Տէրն մեր Յս Քս ասէ ։

Ես եմ որթն ճշմարիտ. եւ հայր իմ մշակ է ։

Ամենայն ուռ՝ որ յիս է, եւ ոչ բերէ ըպտուղ, կտրէ զնա. եւ ամ որ բերէ ըպտուղ՝ սրբէ զնա, զի առաւել եւս պտղաբեր լիցի ։

Դուք արդէն սուրբ էք վասն բա-



նին

նին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ ։

Կացէք յիս՝ և ես ՚ի ձեզ . ոպ ուռն ոչ կարէ զպտուղ բերել յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն, նոյնպէս և դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք ։

Ես եմ որթ՝ և դուք ուռ . որ հաստատուն է յիս՝ և ես ՚ի նմա, նա բերէ զպտուղ յոյժ . զի առանց իմ ոչինչ կարէք առնել ։

Եթէ ոք ոչ է հաստատեալ յիս, ել նա արտաքս իբրև ուռն՝ և ցամաքեցաւ . և ժողովեն զնա՝ և ՚ի հուր արկանեն՝ և այրի ։

Եթէ կայցէք յիս՝ և բանք իմ ՚ի ձեզ կայցեն, զորինչ կամիցիք, խնդրեսջիք՝ և լինիցի ձեզ ։

Յայսմիկ փառաւորեցաւ հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք . և եղիջիք իմ աշակերտք ։

Որպէս սիրեաց զիս հայր, և ես սիրեցի զձեզ . հաստատուն կացէք ՚ի սէր իմ ։

Եթէ պահիցէք զպատուիրանս իմ, կացջիք ՚ի սէր իմ . որպէս և ես զպատուիրանս հօր իմյ պահեցի, և կամ ՚ի սէր նր ։

Սարկաւագն քարոզեսցէ ։

Լուիցէ Տր̃ ձայնի աղաչանաց մերոց, ըն-
կալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ
զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր.
աղօթք մեր և խնդրուածք յամ ժամ
մտցեն առաջի տէրուն̃ Տր̃. և նա տացէ
մեզ միաբան միով հաւատով և արդա-
րութե̃ վաստակել ի գործս բարեաց, զի զո-
ղորմութն̃ զշնորհսն իւր արասցէ ի վր̃ մեր.
Տէրն ամենակալ՝ կեցուսցէ և ողորմեսցի ։

Քահանայն ասասցէ զաղօթս ։

Օրհնեա՛ Տր̃ Ած̃ մեր, զհնձանս, զխա-
ղողս, զգուբս, զտակառս, զկճարանս, և
զգինիս. օրհնեա՛ տէր, և սրբեա՛ զսոսա
սրբութե̃ քով, և արա՛ զգինիս զայս, զի
որք արբցեն ի պատեհ ժամանակի զսա ի
փառս տէրութե̃ քո, ստասցեն զսրբութի̃
սրտի, զմաքրութի̃ հոգւոյ, զխոնարհութի̃
մտաց, և զառողջութի̃ անձանց. և արժա-
նաւորեա՛ զսա լինել նշանակ արեան կենա-
րարին մերոյ ։ Ով բարերար Տէր, որպէս



օրհ

օրհնեցեր զջուրն ՚ի կանա գալիլիացւոց և
փոխեցեր զայն ՚ի գինի , և օրհնեալ՝ ար_
բեր և արբուցեր աշակերտաց քոց և այ_
լոց , սքանչելի հրաշագործութբ . օրհնեա՛
և այժմ ողորմութբ քով զգինիս զայս , և
շնորհեա ըմպողացս որ՝ մասնաւորիլ բազ_
մելոյն ՚ի հարսանիսն յայն , և զմայլիլ ու_
րախութբ՝ շնորհօք սբյ հոգւոյն փառաւորեսցի
քո , որպէս՝ որք անմահարար բաժակաւն
զմայլեցան ուսաք Առաքելոյն ՚ի տր մեր վեր_
նատանն : Օրհնեա՛ տր և զտմ աշխատա_
ւորս սորա և սբյ Աթոռոյս , զհամայն ըզ_
միաբանութիս մեր , և զուխտունական ուխ_
տաւորսն . և շնորհեա՛ մեզ ամենեցունցս՝
հոգևոր և մարմնաւոր առողջութի , որպ զի
վայելելով խաղաղութբ զուրախարար բա_
ժակս յառաւօտաղեղ պարգևաց քոց , մե_
ծարէ գոհանալով փառաւորեսցուք ըզ
Քեզ ընդ հօր՝ հանդերձ ամենազօր սբ_
հոգւովդ , այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից . ամէն :

Ձայն՝ Դ. Կող, Մէ խաչին": Զօրթք, Պաշտպա":
Եւ երիցս անգամ թափօր շրջեսցին միաբանութե
ի մէջ գերեստանն՝ ասելով շարական այս :

Արեգականն արդարուէ ծագման արու- սեակդ առաւօտեալ. նախընթաց ճանա- պարհի որդւոյն քո տնօրէնուէ տր յով- հաննէս. առ. քն բարեխօսեա փրկան ան- ձանց մերոց :

Բարձրելոյն անճառ խորոց տեսանող ի- մաստիւք հոգւոյն. ի յորովայնէ մաքրել տաճար քո և բնակարան սուրբ երրորդու- թեանն. առ. քն :

Գաբրիէլ հրեշտակապետն աւետեաց առ զաքարիաս. աւետարանել ըզհրաշալի ծննդեանդ քո սուրբ՝ յամուլ ծերոյն եղի- սաբեթէ. առ :

Զօրապետն երկնից զօրացն երևեալ քա- հանայապետին. յորժամ մտանէր ի սըր- բութիւն սրբոցն խնկարկելով՝ ըստ օրինացն ի տաճարին. առ :

Եւ տեսեալ զանհիւթականն ի ձև մարմ-



նոյ

նոյ յաջմէ սեղանոյն · պակուցմէլ յերկիւղ
մահու սասանելով և հաստատուր բանիւ
հրեշտակին · առ ։

Օգերագոյն քան ըզբնունն լցեալ զեղա-
նակ ծնընդեանն քո · սոսկացեալ հիւ-
նայր զաքարիաս՝ և համրացեալ պատժիւր
պապանձեալ լեզուաւ · առ ։

Կակից բանն ի հօրէ՝ իջեալ յերկնից
ընկերն ձայնիդ · ուստի գաբրիէլ վերա-
ւաքէր զկոյսն մարիամ՝ առ ամլուն յղա-
ցեալն ըզքեզ յորովայնի · առ ։

Ընդ ժամանել ձայնի ողջունին մարիամու
առ եղիսաբեթ · խայտացեր ձայնդ ընդ-
առաջ բանին որ՝ յորովայնէ ամլոյն երկըր-
պագելով · առ ։

Թագաւորըն բոլորից պարածածկեալ
յարգանդի կուսին · զոր ծառայդ հաւա-
տարիմ տեսեալ հոգւովըն սըրբով՝ և բե-
րանով մօր քո օրհնաբանէիր · առ ։

Յորժամ էջ ի յորդանան հուրն անծ ի
բէն մըկըրտիլ · վերնական իշխանու թեւքըն

 զահի

զահէ հարեալ զարմանայլին նորահրաշ տես_
լեամբն . առ ։

Չար իշխանըն խաւարին յաշխարհական
մեղաց ծովէս հալածեցաւ՝ ջրոյն յոր_
դանանու . մկրտեալն ի քէն ըզգլուխ
վիշապին ի նմին խորտակեաց . առ ։

Վարագլուխ մարգարէից օրինադրէր
զգառն օրինակին . իսկ դու ըզճշմարիտ օ_
ծեալն ըզքս՝ անուանեցեր գառն այ և
բարձող մեղաց . առ ։

Ջուր մաքրութե ի քէն մկրտելոցն յար_
բուժմն իմաստից . այլատամբացն յեր_
կիւղ հատմամբ տապարին՝ և խոնարհացն
ի խորատ իմաստութե . առ ։

Փութացիր մեզ յօգնութի առ ի մերուստ
մբ յովհաննէս . առաքեալ և մարգարէ և
կարապետ՝ և մկրտիչ որդւոյն այ . առ ։

Քահանայապետին քսի որ ի խաչին պա_
տարագեալ . քահանայք նիքհանրէր մա_
տո զպատարագամն՝ երգաբանիս և տօնողաց
շնորհեալ զքաւութի . առ ։

Եւ զկնի, ըստ սովորութեան՝ Սարկաւագն ասասցէ
Ամէն. ալէլուիա ալէլուիա ալէլուիա։ Եւ օրհ-
նեսցեն խաչիւն զգինին երիցս անգամ, ասելով.
Օրհնեսցի և սրբեսցի գինիս այս, նշանաւ սբ։
Ապա՝ Քարոզ, Սբ խաչիւս։ Աղօթք, Պահպա։
Հայր մեր որ յերկինս։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библ...
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ